ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Հասմիկ Ստեփանյան, Պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն) 2023 թվականի նոյեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 24-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ, Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային զարգացման կենտրոն (IMF-CCAMTAC)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Պետական ֆինանսների վիճակագրություն և պետական պարտքի վիճակագրություն թեմայով դասընթացին

5. Քննարկված թեմաները.

- Պետական ֆինանսների վիճակագրության և պետական պարտքի վիճակագրության վերջին զարգացումները,
- Պետական ֆինանսների վիճակագրության հաշվեգրման սկզբունքը,
- Պետական ֆինանսների վիճակագրության կանխիկի սկզբունքը ընդդեմ հաշվեգրման սկզբունքի,
- Հանրային հատվածի սահմանագծումը պետական ֆինանսների վիճակագրությունում,
- Պետական, պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվառումը պետական ֆինանսների վիճակագրությունում,
- Պետական ֆինանսների վիճակագրության կազմման գործընթացների փաստաթղթավորում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 9 երկրների 27 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային զարգացման կենտրոնի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի, տեխնիկական վարժություններ կատարելու ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց առաջադրվել են պետական ֆինանսների վիճակագրության կազմման տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի շրջանակներում կարևորվեցին պետական ֆինանսների վիճակագրության պատասխանատուների հստակ շրջանակ սահմանելը, համապատասխան ինֆորմացիայի փոխանցելիության անհրաժեշտությունը, որը հնարավերություն կտա բարձրացնել վիճակագրության որակը: Դասընթացի կազմակերպիչները կարևոր էին համարում գերատեսչության կազմում պետական ֆինանսների վիճակագրությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանման առկայությունը:

Վիճակագրության որակը բարձրացնելու համար առաջարկում եմ կատարել քայլերի հետևյալ հաջորդականությունը.

- սահմանել պատասխանատուների հստակ շրջանակը (վարչության մակարդակով)

- կազմել և հրապարակել մեթոդական ուղեցույցները
- սահմանել շահագրգիռ մարմինների հետ տեղեկատվության փոխանակման ձևանմուշները և ժամանակացույցը
- վերոնշյալ բոլոր հարցերի վերաբերյալ մեկ իրավական ակտ սահմանել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

27 նոյեմբերի, 2023թ.